

Բայասեռի քերականական կարգի դրսևորումների առանձնահատկությունները

Սանթրյան Արեն

Հանգուցային բառեր. բայի արժույթ, անցողական բայեր, սեռային ածանցներ, ենթակա, սեռի խնդիրներ, բնության խնդիրներ

Հոդվածը գրելու շարժառիթը գործընկերոջս՝ Դ. Գյուլգաստյանի մի հոդվածն է (տե՛ս «Անցողականության և բայասեռի քերականական կարգերի տիպաբանություն», Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 3, (18), Ե., 2015 թ.), որում նա փորձում է նորովի հիմնավորել ու արդարացնել պատճառական, անդրադարձ ու փոխադարձ սեռերի գոյությունը հայերենում, իսկ բայասեռի քերականական կարգը (նաև անցողականությունը) քննել արժույթի տիրույթում՝ որպես վերջինիս ենթակարգ:

Հայ լեզվաբանների՝ բայասեռի բնորոշումները սկզբունքորեն չեն տարբերվում¹: Սեռը բնորոշվում է որպես «գործողի ու գործողության հարաբերություն» (Էդ. Աղայան), «Քերականական ենթակայի ու խնդրի, տրամաբանական սուբյեկտի ու օբյեկտի փոխհարաբերություն» (Մ. Ասատրյան), «գործողության հարաբերումը ենթակային ու խնդրին՝ բացահայտելով տրամաբանական սուբյեկտն ու օբյեկտը» (Հովհ. Բարսեղյան), «գործողության հարաբերումները առարկաներին՝ մի կողմից գործողին, մյուս կողմից՝ գործողության առարկային» (Մ. Աբրահամյան), «գործողության հարաբերությունը այն կատարողի (սուբյեկտի) և կրող առարկայի (օբյեկտի) նկատմամբ» (Ալ. Մարգարյան), «եղելության (գործողության) հեղինակի օտարումը եղելությունից (գործողությունից)» (Գ. Ջահուկյան), «առարկաների ու նրանց գործողությունների ու եղելությունների իրական կամ որպես այդպիսին մտածվող հարաբերությունների քերականական վերացարկում» (Ա. Աբրահամյան) և այլն:

Բայի սեռը ուսումնասիրվում է ձևաբանության տիրույթում, քանի որ բայերն ունեն *-վ-* և *-ցն²* սեռաձանցներ ստանալու և դրանով սեռային հակադրություններ ստեղծելու հատկություն: Բայց այն, այնուամենայնիվ, վերջնականապես ճշտվում

¹ Այս մասին մանրամասն տե՛ս հիմնականում հետևյալ աշխատությունները: Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 373-379: Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 287-292: Հովհ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1953, էջ 119-132: Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962, էջ 419-723: Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 265-276: Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 320-327: Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1971, էջ 152-165: Մ. Ասատրյան, Բայի սեռը ժամանակակից հայերենում, Ե., 1959: Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Ե., 1983, էջ 219-239:

² Ռ. Իշխանյանը-ցն-ածանցը սեռաձանց չի համարում: Տե՛ս նշվ. աշխ., էջ 162:

է շարահյուսական մակարդակում, որովհետև, ինչպես նկատելի է վերոբերյալ ձևակերպումներից, գործառվում են *ենթակա, խնդիր* շարահյուսական հասկացություններ:

Մեր կարծիքով, բայասեռը առավելապես շարահյուսական կարգ է հետևյալ պատճառներով:

1. Եթե բայը ձևաբանորեն նշույթավորված չէ, բայասեռը որոշվում է միայն բառակապակցության մեջ՝ հաշվի առնելով բայի՝ ուղիղ խնդիր առնելու կամ չառնելու ներունակությունը: Այսպես տարբերվում են ներգործական և չեզոք բայերը. հմմտ. *տեսնել* (ինչը), *մոտենալ* (0), *վազել* (0):

2. Եթե բայը ձևաբանորեն նշույթավորված է՝

2.1. և ունի *-լ/-* ածանց,

ա) սեռը նույնպես որոշվում է բառակապակցության մեջ, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատվել է, կրավորական բայերի մեծ մասը պոտենցիալ կերպով չեզոք է³. հմմտ. *թեքվել* (ինքնիրեն) և մեկի կողմից: *-Վ-* ի առկայությամբ բացառվում է ներգործականությունը, բայց միաժամանակ դեռ չի փաստվում կրավորականությունը⁴:

բ) Իհարկե, *-լ/-* ածանց ունեցող մի շարք բայերի համար, որոնցում *-լ/-* և ըստ էության համարժեք է սուկածանցի (առանց այս ածանցի բայը գոյություն չունի), բայասեռը որոշվում է առանց շարահյուսական միջոցների. այս բայերը չեզոք սեռի են: Սրանք այն բայերն են, որոնք չունեն իրենց համապատասխան ներգործական ձևերը և կրավորականի իմաստ արտահայտել չեն կարող, ինչպես՝ *բնակվել, գծվել, մոլորվել, ուշաթափվել, սիրահարվել* և այլն: Սրանց քանակը չորս տասնյակից կարծես չի անցնում⁵:

2.2. և ունի *-ցն/-* ածանց, այս դեպքում ևս չի կարելի միանշանակ պնդել, որ բայը ներգործական (անցողական) է: Օրինակ՝ *դողայ, Ֆշշալ* չեզոք սեռի բայերը, *-ցն/-* ածանց ստանալով, չեն փոխում իրենց սեռային պատկանելությունը և մնում

³ Տե՛ս Մ. Աբրահամյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974, էջ 295: Կրավորական բայերի չեզոք իմաստով կիրառությունների մասին մանրամասն տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 231-234:

⁴ Կան ներգործականներից սերված, *-լ/-* ածանց ունեցող բայեր, որոնք սահմանափակ կիրառություններում չեն փոխում սեռային պատկանելությունը և (*լ/* ածանց ունենալով հանդերձ) շարունակում են պահանջել ուղիղ խնդիր: Այդպիսիք են *տանել, բաժանորդագրել* բայերը, որոնց ուղիղ խնդիրները շարունակում են պահպանվել նաև այս բայերի՝ *-լ/-* ածանց ստանալու դեպքում: Հմմտ. *տարվել խաղը, բաժանորդագրվել թերթ*: Սրանք եզակի բացառություններ են և օրինաչափական համարվել չեն կարող: Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 658:

⁵ Այս բայերի մի յուրահատկությունն այն է, որ սրանցից-ցն-ածանցով ներգործական սեռի բայեր կազմելիս *լ/-*ն դուրս է ընկնում, ինչպես՝ *հաշտվել-հաշտեցնել, հնազանդվել - հնազանդեցնել*: Բացառություն է *գծվել* բայը, որում *լ/-*ն պահպանվում է՝ *գծվեցնել*: Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 238:

են չեզոք, ինչպես՝ *ֆշշացնել, դողացնել*:

Այսպիսով՝ վերաբերյալից բխում է, որ թե՛ *-վ-*, թե՛ *-ցն-* ածանցները սեռային ցուցիչի (սեռային ածանցի) իրենց դերը թույլ են կատարում, ուստի բայասեռը որոշելու ամենահուսալի ուղին մնում է շարահյուսական միջոցներով այն որոշելը, որից էլ բխում է, որ բայասեռը առավելապես շարահյուսական, քան ձևաբանական կարգ է:


Բայասեռին առնչվող շարահյուսական միջոցներից՝ ենթակայից ու սեռի խնդիրներից, բայասեռի որոշելու ու տարբերակելու հարցում էական ու կարևոր են խնդիրները, իսկ ենթական այդ դերը ստանձնում է երկրորդաբար:

Նախ՝ բայասեռը շարահյուսական միջոցներով կարելի է որոշել արդեն բառակապակցությամբ՝ առանց նախադասություն կազմելու՝ անդեն բայի հետ կիրառելով համապատասխան սեռի խնդիր: Դա հատկապես վերաբերում է *-վ-* կամ *-ցն-* սեռածանց չունեցող բայերին, ինչպես՝ *բերել // տանել // նկատել // զարկել՝ ի նչ, մոտենալ ինչի ն, հիանալ ինչո՞վ* (ուղիղ (սեռի) խնդիր չեն պահանջում), *գնահատվել // ուղարկվել // հրավիրվել՝ ու՞մ կողմից՞*:

Միայն կրկնասեռ բայերի սեռը որոշելիս է կարևորվում ենթակայի դերը, հատկապես էթե նկատի ունենանք, որ փոխակերպումների դեպքում ենթականերն են վերաձվում սեռի խնդիրների. ներգործական նախադասության ենթական՝ ներգործող անուղղակի խնդրի, կրավորական նախադասության ենթական՝ ուղիղ խնդրի:

Երկրորդ՝ բայը կարող է լինել միակազմ (անենթակա) նախադասության գլխավոր անդամ, ուստի և առաջին պլան կմղվի գործողության հարաբերումը ուղիղ և ներգործող խնդրին: Եվ ենթակայի բացակայությունը (ինչպես և բառակապակցությունների դեպքում) չի կարող ազդել բայի սեռը որոշելու վրա: Հմմտ. *Քեզ կանչում են հեռախոսի մոտ* միակազմ նախադասությունը, որում *կանչել* բայի սեռը որոշելիս ենթական չի կարող վերականգնվել. այն պարզապես չկա:

Գործողության հարաբերությունը ենթակայի և խնդիրների նկատմամբ կարելի է արտահայտել հետևյալ գծապատկերով.



«Պատճառական», «անդրադարձ» և «փոխադարձ» սեռերն առանձնացնող-

⁶ Կրավորական բայերի արտահայտած կրավորական և չեզոք սեռերի իմաստների տարբերակման մասին մանրամասն տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Ե., 1983 թ., էջ 235-239:

ներն ուշադրություն են դարձնում գծապատկերների ձախ կողմին՝ ենթակային, մասնավորապես տրամաբանական և քերականական ենթակաների հարաբերությամբ:

Նախ՝ «պատճառականների» մասին: Մրանք այն բայերն են, որոնց քերականական ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ միայն պատճառ է լինում, որ ուրիշը մի բան կատարի, ինչպես՝ *Ես դասը կարդացնում եմ ուսանողներին*: Այլ կերպ՝ կարևորվում է տրամաբանական և քերականական ենթակաների տարբերությունը:

Մինչդեռ եթե ամեն մի տրամաբանական կարգի (կամ երևույթի տրամաբանական դրսևորման) համար փորձենք գտնել համապատասխան քերականական կարգը, կվերացնենք տրամաբանականի և քերականականի սահմանը: Ուղիղ խնդիրն էլ ունի տրամաբանական տարբեր դրսևորումներ. այն կարող է առաջանալ կամ վերանալ գործողության հետևանքով, ինչպես՝ *կառուցել // քանդել շենք*, փոփոխություն չկրել, ինչպես՝ *տեսնել տուն*, և առհասարակ որևէ ներգործության չենթարկվել, ինչպես՝ *հիշել Աշխենին* (Աշխենը չգիտի էլ, որ իրեն հիշել են): Բայց այս տարաբնույթ դրսևորումները չեն խանգարում մեկ քերականական վերացարկման համար. ընդգծված բառերը ուղիղ խնդիր են՝ դրված հայցական հոլովով⁷:

Պատճառական բայերի սեռային հատկանիշը գնահատելիս անտեսվում են մի քանի հանգամանքներ: Նախ՝ «պատճառականության իմաստը բայի մեջ չի վերացնում ներգործականությունը, ուրեմն դրանք իրար բացառող հատկանիշներ չեն. ավելին, պատճառականությունը հաճախ նպաստում է ներգործականության ձևավորմանը. ***մինչդեռ սեռային վերականգնավորումների դեպքում նոր կազմված սեռով բացառվում է նախորդը*** (ընդգծումը՝ Ա. Ս.)»⁸

Այսքանով կարելի էր բավարարվել, դադարեցնել բանավեճը և պատճառական սեռի (ու ոչ միայն) գոյությունը այլևս չանդրադառնալ: Բայց քանի որ սկսել ենք...

Ինչպես արդեն ասվել է, *-ցն-* ածանցը սեռային ցուցիչի դերը թույլ է կատարում. դրվելով չեզոք սեռի բայերի վրա՝ կարող է և չփոխել նրանց սեռային պատկանելությունը, օրինակ՝ *դողացնել*: Դա հատկապես վերաբերում է բնաձայնական բայերին, ինչպես՝ *խոսացնել, փնջացնել, Ֆշացնել, փոթկացնել* և այլն⁹:

⁷ Ներգործող անուղղակի խնդիրն էլ կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ բացառականով, գործիականով կամ կապական կապակցությամբ, ինչպես՝ *բշվել քամուց, շրջապատվել հրոսակներով, բերվել նրա կողմից*: Ու քանի որ այս տարբեր ձևերը բովանդակային պլանում չեն հակադրվում, քերականորեն ըմբռնվում են որպես ներգործող անուղղակի խնդիր և ոչ թե տարբեր խնդիրներ:

⁸ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 192:

⁹ Ինչպես նկատում է Ա. Աբրահամյանը, քերականական այս երևույթը ընդհանուր օրինաչափության չի վերածվել. կան բնաձայնական չեզոք բայեր, որոնք պատճառական ածան-

Քննենք-ցն-ածանցով նշույթավորված բայերով հետևյալ կապակցությունները.

- ա) *Կարդացնել ուսանողին դաս*. առկա է և՛ պատճառական երանգ, և՛ կրկնակի խնդրառություն:
- բ) *Հագցնել երեխային շոր*. չկա պատճառական երանգ, բայց կա կրկնակի խնդրառություն:
- գ) *Փախցնել գնդակը*. չկա ոչ պատճառական երանգ և ոչ էլ կրկնակի խնդրառություն:

Օրինակները ցույց են տալիս, որ պատճառականության առկայությունը կամ բացակայությունը, կրկնակի (յուրահատուկ) խնդրառության առկայությունը կամ բացակայությունը չեն ազդում մե՛կ հանգամանքի, այն է՝ ուղիղ խնդիր պահանջելու վրա: Այլ ձևակերպմամբ՝ այս բայերի համար ընդհանուրը (բացի -ցն- ածանցի առկայությունից) ուղիղ խնդիր առնելն է, ներգործականությամբ օժտված լինելը:

Բայասեռը որոշելը չի կարելի պայմանավորել արժույթայնությամբ՝ պատճառական սեռը դիտելով եռարժույթ բայերի տիրույթում, ներգործական և կրավորական սեռերը՝ երկարժույթ, անդրադարձ և փոխադարձ սեռերը՝ միարժույթ, չեզոք սեռը՝ արժույթագուրկ կամ զրո արժույթ¹⁰:

Առաջին՝ գործողության (եղելության) և առարկաների բոլոր տեսակի առնչումները սեռային նշանակություններ չեն ստեղծում: Անանցողական բազմաթիվ բայեր ուժեղ խնդրառությամբ կարող են պահանջել տարբերույթ անուղղակի խնդիրներ, ինչպես՝ *մոտենալ պատին, նպաստել գործին, կռվել թշնամու դեմ, վախենալ գայլից, հպարտանալ հաջողությամբ* և այլն:

Անցողական բայերը ևս, ուղիղ խնդրից բացի, ուժեղ խնդրառությամբ կարող են կապակցվել այլ խնդիրների հետ, ինչպես՝ *գրել նամակ մատիտով, նվիրել գիրք ընկերոջը, ստանալ հեռագիր եղբորից*:

Բոլոր դեպքերում ուժեղ խնդրառությամբ պայմանավորված անուղղակի խնդիրները բայասեռը տարբերակելու վրա ազդեցություն չունեն, ուստի և բայասեռն ըստ արժույթի որոշելը հայերենում հիմքեր չունի:

Երկրորդ՝ արդեն ասվեց, որ բայասեռի կարգը արժույթի հետ կապելով՝ անտեսվել են բազմարժույթ (քառարժույթ և ավելի) բայերը: Համեմատենք հետևյալ նախադասությունը. *Թագուհին դայակին կաթ խմեցնել տվեց երեխաներին*: Պատճառական *խմեցնել տալ* բայի տիրույթում չորս գոյական կա՝ դրված տարբեր հոլովներով՝ *թագուհին, դայակին, կաթ, երեխաներին*: *Դայակին* գոյականի առկայությունը անհրաժեշտ է և պայմանավորված է կրկնակի պատճառական

ցով փոխում են իրենց սեռը, ինչպես՝ *դմբովբացնել, ճպճպացնել, թրխկացնել* և այլն: Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 579-580:

¹⁰ Տե՛ս Դ. Գյուլգասյան, նշվ. աշխ., էջ 37-38:

խմեցնել տալ բայով¹¹:

Առհասարակ պատճառական բայերը (ներգործականներից *-ցն-* ածանց ստացած կամ *տալ* բայով հարադրված) գործողության անմիջական ոլորտի մեջ մտնում են մեկ առարկա ևս՝ գործողության սկզբնապատճառ հանդիսացող առարկան, որը դրվում է տրականով և հորջորջվում է որպես պատճառական¹² կամ միջնորդական¹³ խնդիր: Կրկնակի պատճառականների դեպքում (երբ բուն պատճառական բայերը հարադրվում են *տալ* բային՝ *խմեցնել տալ, հասկացնել տալ*) արդեն գործ ունենք ենթակայի և երեք այլ առարկաների միջև կատարված գործողության հետ: Եվ եթե բուն պատճառական բայերի միջնորդական (պատճառի) խնդիրը կարևորելով՝ առանձնացնում են պատճառական սեռ, ապա, հետևողական լինելու դեպքում, նույնը պիտի արվեր կրկնակի պատճառական բայերի համար՝ նրանց հատկացնելով առանձին սեռ:

Երրորդ՝ Դ. Գյուլգասոյանը գրում է, որ եռարժույթ պատճառական բայը բայասեռի երկու խնդիր է առնում, որոնցից փոխակերպման ժամանակ կրավորական կառուցվածքում ենթակա է դառնում անձանիշը, իսկ *ոչ անձանիշը* մնում է նույն կրող խնդրի պաշտոնում¹⁴:

Մի կողմ թողնենք կրավորական կառույցում կրող խնդրի առկայության հոգեցունց փաստը և բերենք նախադասություն, որի ստորոգյալների տիրույթում գտնվող գոյականները բոլորն անձանիշ են, ինչպես՝ *Ստալինը Գալինինին նախագահ ընտրել տվեց // Ստալինը պատգամավորներին նախագահ ընտրել տվեց Գալինինին*: Օրինակները ցույց են տալիս, որ բայի տիրույթում անձանիշ և ոչ անձանիշ գոյականների պարտադրականություն տեսնելը և դրանով սեռը տարբերակելը սխալ է: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ նախադասության ստորոգյալը կրկնակի պատճառական չէ, բայց հարաբերվում է 4 գոյականների հետ:

Չորրորդ՝ եթե պատճառական բայերի տրականաձև խնդիրը այդքան կարևոր է սեռը գնահատելու համար, ապա փոխակերպումների (սեռային վերակազմավորումների) ժամանակ փոփոխություն պիտի կրի որպես սեռի խնդիր, ինչպես ուղիղ և ներգործող խնդիրները: Մինչդեռ այն մնում է անփոփոխ, ինչպես բնության բոլոր խնդիրները¹⁵, հմմտ. *Ես ուսանողներին դաս եմ սովորեցնում – Իմ կողմից դաս է սովորեցվում ուսանողներին*:

¹¹ Հմմտ. Հովի. Բարսեղյանը կրկնակի պատճառական է կոչում *-ցն-*ածանցով պատճառականներով ու *տալ* բայով հարադրված բայերը. տե՛ս նշվ. աշխ., էջ 124:

¹² Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 378:

¹³ Տե՛ս նույն տեղում, նշվ. աշխ., էջ 555:

¹⁴ Տե՛ս Դ. Գյուլգասոյան, նշվ. աշխ., էջ 41:

¹⁵ Հիշտն ասած, Դ. Գյուլգասոյանի՝ հողվածում առաջարկված (կատարած) փոխակերպումները տառապում են որոշ արհեստականությամբ ու կամայականությամբ (դա նկատում է նաև ինքը), ուստի դրանց մանրամասն չենք անդրադառնում:

Իսկ հայերենի համար օրինաչափական է փոխակերպումների ժամանակ սեռի խնդիրների փոխակերպումը ենթակայի (և հակառակը):

Այսպիսով, «պատճառական» սեռի առանձնացման համար կարևորվում է երկու հանգամանք՝ յուրահատուկ (կրկնակի) խնդրատությունը և քերականական ենթակայից տարբեր տրամաբանական ենթակայի առկայությունը: Ցույց տվեցինք, որ պատճառականությունը կարող է դրսևորվել նաև առանց տրամաբանական ենթակայի¹⁶, իսկ յուրահատուկ խնդրատություն կարող է հատուկ լինել նաև այլ՝ ոչ պատճառական բայերի:

«Փոխադարձ» սեռի բայերը ցույց են տալիս մի քանի (առնվազն երկու) առարկաների այնպիսի գործողություն, որը այդ առարկաներից յուրաքանչյուրը կատարում է մյուսի նկատմամբ, այդ առարկաներից յուրաքանչյուրը տրամաբանորեն հանդես է գալիս որպես մյուս առարկայի (առարկաների) կատարած գործողության օբյեկտ: Այդպիսի բայերից են՝ *համբուրվել, տեսնվել, ողջագուրվել, փաթաթվել* և այլն:

Նկատելի է, որ բայերը գնահատելիս կարևորվում են ենթակաները, հատկապես դրանց հոգնակի կամ բազմակի լինելը:

Համեմատենք հետևյալ նախադասությունները.

ա) Ընկերները (Հակոբն ու Վահանը) փաթաթվեցին (իրար):

բ) Վերքը փաթաթվեց բուժքրոջ կողմից:

գ) Խմածը փաթաթվեց ծառին:

դ) Նա փաթաթվեց վերմակի մեջ:

Առաջնորդվելով բայասեռի տարբերակման «ենթակայակենտրոն» ուսմունքով՝ առանձնացնելու ենք 3 սեռ՝ համապատասխանաբար «փոխադարձ», կրավորական, չեզոք (տույնիսկ «կրկնասեռ») տերմինն է դառնում «հնացած», և ստիպված ենք լինելու ներմուծել «եռասեռ», «քառասեռ» տերմինները):

Բայց կարող են լինել տրամաբանական փոխադարձության այլ դեպքեր ևս, ինչպես՝

ե) Հայրը որդու հետ համբուրվեց:

զ) Նրանք վիրավորվել են իրարից:

է) Նրանք խռովել են // նեղացել են իրարից:

ը) Նրանք բաժանվեցին:

Հինգերորդ՝ ե) կետում նշված նախադասության մեջ չկա բազմակի կամ հոգնակի ենթակա, բայց ակնհայտ է տրամաբանական փոխադարձությունը: Մյուս երեք նախադասություններում նշված գործողությունները ենթակաները ոչ թե իրար նկատմամբ են կատարում, այլ իրարից հակառակ ուղղությամբ, այն տարբերությամբ միայն, որ՝ նախ՝ գ) կետի նախադասության մեջ ենթակաները բառիս

¹⁶ Քերականականից տարբեր տրամաբանական ենթական հատուկ է ոչ միայն պատճառական կառույցների, հմմտ. *Տղան հոր հետ աշխատում է:*

բուն իմաստով գործողություն չեն կատարում. երկրորդ՝ է) կետի նախադասության բայերը ձևաբանորեն նշույթավորված չեն (չունեն -վ- ածանց): Իսկ ը) կետում նշված *նրանք բաժանվեցին* նախադասության անջատական գործողությունը՝ փոխանդադարձականությունը, նկատել է նաև Դ. Գյուլգաստյանը՝ այն անվանելով փոխգատանցում կամ փոխինքնանցում¹⁷:

Կարելի է էլի բերել բայերի օրինակներ, որոնք համատեղ գործողության (եղելության) նշանակություն են արտահայտում¹⁸, ինչպես՝ *հավաքվել, խմբվել, կուտակվել, կիտվել* և այլն, բնութագրական նշանակություն են արտահայտում, ինչպես՝ *մակարդվել, այրվել, պատռվել* (հմմտ. հատկապես սրանց ենթակայական դերբայները՝ (հեշտ) *մակարդվող՝ այրվող՝ պատռվող*), որոշակի ուղղվածություն են ենթադրում որոշակի տեղում կամ դեպի որոշակի տեղ, ինչպես՝ *սուզվել, խտտորվել, թեքվել, համբարձվել*¹⁹ և այլն, և այլն, և այլն: Բայց սրանք պատճառ չեն կարող լինել այս բայախմբերի համար առանձին սեռ որոշելու համար՝ նրանց ու նրանց ենթակաների ինչ-ինչ տրամաբանական հարաբերությունից ելնելով:

Ավելին՝ փոխադարձություն կարելի է արտահայտել այն դեպքում, երբ բայը փոխադարձ դերանուն լրացում առնի՝ դրված տրական կամ հայցական հոլովով, ինչպես՝ *նայում են // մոտենում են // ջրում են // ցեխտում են իրար*:

«Անդրադարձ» սեռի բայերի գործողությունը ուղղված է հենց իրեն՝ ենթակային: Ենթական նման դեպքերում հանդես է գալիս նաև գործողությունը կրողի դերում (տրամաբանական ուղիղ խնդիրն է): Այդպիսի բայեր են՝ *հազնվել, սափրվել, հանվել, պատրաստվել, փաթաթվել, շփվել* և այլն: Այս բայերի համար ենթական տրամաբանական կրող (և ոչ թե այլ) խնդիր դիտելը պայմանավորված է թերևս նրանով, որ սրանց անաճանց ձևերը ներգործական սեռի են:

Վերջապես լինում են դեպքեր, որ ներգործական սեռի բայը տրամաբանական անդրադարձության գաղափար է արտահայտում, երբ առնում է ուղիղ խնդիր լրացում՝ արտահայտված անձնական դերանվամբ: Օրինակ՝ *Նա սպանեց իրեն: Դու սպառել էս քեզ: Ես ինձ կնվիրեմ իմ ժողովրդին: Ես գարմացրի ինձ*: Բայց դա քերականական անդրադարձություն չի համարվում (երևի այն պատճառով, որ բայերս -վ- ածանց չունեն):

Այսպիսով՝ և՛ փոխադարձությունը, և՛ անդրադարձությունը չեզոք սեռի (կրավորական բայերի) իմաստի մասնակի դրսևորումներից են, իմաստային երանգներ են և հաճախ պայմանավորված են շարահյուսական շրջապատով: Ընդ որում, ինչպես տեսանք, կան այլ իմաստներ ևս: Ինչ վերաբերում է նշված բայերի սեռային ընդհանուր արժեքի գնահատմանը, պետք է ընդունել, որ դրանց հատուկ է կրկնասեռությունը:

¹⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 43:

¹⁸ Հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 635-639:

¹⁹ Այս բայը կազմված է համարժեք *համբարձնալ* բայի կատարյալի հիմքից:

Особенности выражения грамматической категории глагольного залога

Сантоян Арен

Резюме

Ключевые слова: глагольная валентность, переходные глаголы, залоговые аффиксы, подлежащее, прямое дополнение с глаголами действительного и страдательного залога, косвенное (опосредованное) дополнение

Грамматическая категория глагольного залога является морфолого-синтаксической категорией. Аффиксы «Վ» («в») и «ցի» («цн») создают залоговую оппозицию, а залог окончательно корректируется на синтаксическом уровне возможным наличием или отсутствием прямого и агентивного дополнений.

Глагольный залог не обусловлен валентностью глагола, потому что отношения любого рода между деятельностью (событием) и предметами не получают залогового значения. Как переходные глаголы могут – кроме прямого дополнения – при сильном управлении соединяться с другими объектами (напр., писать письмо карандашом), так и непереходные глаголы могут требовать многочисленные косвенные дополнения (напр., приблизиться к стене). Косвенные дополнения, обусловленные сильным управлением, независимо от количества актантов, не влияют на дифференциацию глагольного залога – во всяком случае это актуально для армянского языка. Каузатив нельзя отделить от действительного залога, потому что причинно-следственные отношения глагола не исключают реальности, иначе – нет разницы с точки зрения взаимоотношений между действием и прямым дополнением. Ср.: Я читаю текст. Текст прочитывается студентами. «Взаимный залог» и «возвратный залог» также не являются отдельными залогами, а представляют собой частные проявления семантики медиального залога пассивных глаголов, обусловленных синтаксическими факторами.

Следовательно, правы те исследователи, которые в армянском языке выделяют три залога: действительный, страдательный и медиальный, а залог не связывают с валентностью глагола и рассматривают вне зависимости от нее.

Peculiarities of Manifestations of the Grammatical Category of Voice

Santoyan Aren

Summary

Key words: *verb valency, transitive verbs, voice affixes, subject, voice-identifying objects, indirect objects*

The grammatical category of voice is a morphological - syntactic category: the affixes *-լ-* (*-v-*) and *-ցն-* (*-tsn-*) create voice oppositions; and the voice is finally identified with the help of availability or absence of voice-identifying objects – direct objects and indirect objects – on the syntactic level.

The voice of the verb may not be conditioned upon the verb valency, since all types of relations between actions (occurrences) and objects do not receive voice assignments. Like in the case of transitive verbs, which may connect to other objects (e.g. *գրել նստակ ստոիսով (to write a letter in pencil)*) by means of strong object-adjunction, intransitive verbs may similarly require various indirect objects (e.g. *նոսնկսակ ստոիսին (to approach the wall)*). In any case, indirect objects conditioned upon strong verb-adjunction do not have any influence on the identification of the voice irrespective of the number of actants (this holds true at least in the case of the Armenian language).

The causative voice must not be separated from the active voice, since the causativity in the verbs does not eliminate its activeness; in other words, there is no difference in the correlation between the action and the direct object. Compare: *Ես կարդում եմ դասը – Ես կարդացնում եմ դասը ուսանողներին: (I am reading the lesson – I am having the students read the lesson)*. The “reciprocal” and “reflexive” voices are not separate voices in Armenian either; they are partial manifestations of the neutral voice meaning of passive verbs, conditioned on syntactic factors.

Therefore, it is right on behalf of scholars to distinguish between three voices in Armenian, – active, passive, and neutral – without conditioning the analysis of the voice on the verb valency.